

Ա. Նաբլօնովսկուց.

ԱՐԵՒՄՑԵՇՆ ԱՐԺԻԿԻՆԵՐԻՆ

Դժբաղդ արծիւս՝ ես ստրուկ ծնուեցի  
Եւ իմ լաւագոյն մատաղ տարիներս  
Վանդակում փակուած վշտով անցուցի.  
Անազատ էի, անըաղդ էի ես,

Սակայն սրտիս մէջ աճում էր տենչանք  
Վառ ազատութեան, սիրտս էլ նրա հետ.  
Այժմ ես ազատ եմ, փշրեցի վանդակ.  
Խլեցի պաշտածս, ազատ եմ յաւետ.

Գուցէ մինչև ձեզ ես գեռ չը թռչեմ  
Ազատ, երջանիկ, զօրեղ ընկերներ.  
Բայց ուրախ բարձունք կուղեմ ես, կուզեմ,  
Թռայ ես դէպի ոսկէ ճաճանչներ.  
Անազատ այլ ես չեմ կարող չնչել:

Ես կը սովորցնեմ իմ արծուիկներին  
Մահուան չափ ատել բանտն ու ստրկութիւն.  
Թռող տանջեն նրանց, թէկուզ կոտորեն,  
Միայն չը տանջուեն, չը մնան վանդակում,

Նրանց մէջ կը խազայ արծուի արիւնք,  
Կ'աճեն զօրաւոր ու հպարտ թեեր.  
Կ'աճի սէր դէպի ազատութիւնը,  
Զայրոյթ դէպ խաւար, դէպի կապանքներ.

Նրանք առաւել գուցէ բարձր թռչեն՝  
Քան դուք, վանդակին անծանօթ եղբարք,  
Թռչել միշտ բարձր նրան կստիպեն  
Գերութեան անէծք, նոր անցած տանջանք.